

մէկ դաշտ՝ ծաղկող վարպետներու քամծին, մտացածին պատկերագրութեանց համար:

Ասոնց նիւթը առնուած է յաճախ գրքի յառաջիկայ գլուխը կազմող հարցի ամենակեղերոնական ընտանէն:

Մեր հին գրչադիրներու մէջ սկզբնատառ գլխադիրը միւս տառերէն կը ջոկուի որոշ աստիճանի խոչորութիւնով: Յետագայ ժամանակներու մէջ գլխատառը դարձեր կատարեալ ամբողջական նկար մ'է եղեր...

\*

7-րդ դարէն կը սկսին գլխատառերու կազմութեան մէջ անասնոց կերպարանքով շաղկապումները, որոնք յետագային կը դառնան կատարեալ պատկերագրութիւններ՝ օր. օձ, վիշապ, առիւծ, վագր, եղնիկ, արջ, աղուէս, արագիլ, ափսր, եւայլն:

\* \* \*

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈՏՆԵՐ

Ծաղկող ու պատկերագրողները ինչպէս կը կատարէին իրենց աշխատանքը մագաղաթի վրայ, մէ՞կ անդամէն թէ նախօրօք որիչ կտորի մը վրայ կը փորձէին:

Գրիչը իր բաժին աշխատանքը կատարելու ատեն բաց կը թողու տեղը գլխադիրի, վերտառութեան եւ բառագլխի մեծատառերու: Ասոնց տեղը կը լեցնէ գալիկրափը = զեղազրոյր եւ ծաղկող արուեստագէտը:

Նոյնպէս բաց կը թողուն բոլոր այն էջերը, որոնց վրայ մանրանկարիչը պիտի գետեղէ իր նկարը. նոյնը լուսանցքադարդին վարպետին համար:

\*

Նկարիչը նախ քան վրձինը ձեռք առնելը՝ գծագրեր կամ ծրագրեր է իր նկարին նիւթը սեւ քանափով կամ մրաջուրով, երբեմն նաեւ կարմիրով:

Նկարիչներ, որ աշխատանքի բիւզանդական տեխնիքա ունեցեր են առաջ քան իրենց պատկերագրելի նիւթին երանգաւորումին ձեռնարկելը պատկերագրելի էջին ամբողջ մակերեսը օծեր են՝ այսօր դուր կանաչաւունի նմանող չէզոք մի ընդհանուր գոյնով, որմէ յետոյ շէշտեր են նկարին ցցուն կերպով ար-

տայայտուելիք մասը ըստ կարի մուգ կամ բաց երանգներով:

\* \* \*

ԳՐՁԱԾԱՅՐ, ՏՈՂԱՇԱՐ, ԹԱՆԱՔ, ԹԱՆԱՔԱՄԱՆ, ԳՐԱՍԵՂԱՆ

Հին Հռոմի մէջ գրելու գործիքը կը կոչուէր graphium եւ stylus:

Lecoy կ'ըսէ, թէ «Հայաստանի Անահտական լճին մէջ բուսող մի եղէգ յարգի է եղեր որպէս գրելու համար ամենայրօքը եւ ընդունուածը»:

\*

Գրչածայրին կ'ըսեն եղեր calamus.

\*

Թոչնափետուր գրիչի (որ աւելի նոր է քան եղէգէ գրիչը) պատկերացում օրինակը քանդակուած կայ Հռոմի մէջ դեռ կանգուն Տրայանոսի յաղթական սեան վրայ:

Բացի սաղէն — որուն փետուրի գրիչը մինչեւ մեր օրերը գործածողներ կան — գործածուեր են նաեւ հաւալունի, կարապի եւ ծովային ճայի փետուրները:

\*

ԺԳ. դարէն սկսեալ շիներ են ՄԵՏԱՂԵԱՅ ԳՐՁԱԾԱՅՐԸ. թէեւ այս միտքը նոր չէր, քանի որ Հռոմայեցիք կը գործածէին calami անունով յայտնի սղնձեայ գրչածայրեր:

\*

Հին օրերուն նոյնպէս ծանօթ էր կապարագրիչը, որ կ'ար եւ բարակ plaque-ի ձեւ ունեցեր է:

\*

ԺԲ. դարուն գործածել սկսեր են մատիտը, որ նիւզակի ձեւ ունէր:

\*

Գրչութեան արուեստին վերաբերող այս գործիքներէն ոմանք ունին մէկ դրոշմ կամ մէկ կիսալուսին եւ զարդարուած են խաչով մը կամ շուշանի պատկերով:

\*

Գալով ՀԱՆՔԱԿԱՊԱՐԻՆ՝ մարդիկ ասոր գործածութեան սկսեր են միջին դարու վերջերը:

\*

Տողերու մէջ հուստար հեռաւորութիւն պահելու համար ԿԱՆՈՆԸ կամ ՏՈՂԱՇԱՐ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՅՈՒՊԸ շատ հուց եղեր է:

\*

Շատ անգամ ալ գրիչի տողերուն սկիզբն ու վախճանը մագաղաթի վրայ ՍՐԱԾԱՅՐ ԵՐԿԱՅՈՒՎ ծակելով նշանակեր են:

\*

Գրչութեան միջոցին սխալմունքը ջնջելու միջոցը եղեր է ՍՊՈՒՆԳԸ եւ ՔԵՐԻՉԸ: Սպունդով կը մաքրէին նաեւ եղէգէ գրիչին ծայրերը:

\*